Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ՄԱՐԴ ԾՆՎԵՑ

— Ա՛յ քեզ անխելքի մեկը: Ծնելու ժամանակ գտավ տոների նախօրյակին:

— Հազիվ դիմացավ էդ երջանկությանը:

— Եթե աստծու ողորմածությանն արժանանք, սա համ էլ տղա կբերի, այ, կտեսնեք:

— Նա աշխարհի կբերի ոչ այլ ինչ, եթե ոչ մեսիա:

Այսպիսի խոսակցություններ էին լսվում ամբողջ օրը ատաղձագործ Գենեխի տանը, իսկ Ռեյզլը կծկվում էր, տնքում և չէր հանգստանում:

Լինում էին րոպեներ, երբ նա թաքնվում էր անկյունում, ճմկտում էր դեմքը, եղունգները խրում մարմնի մեջ և մահ աղերսում:

— Ողորմա՛ծ աստված: Երկնային հա՛յր, հարազա՛տս, գթառա՛տս, օգնիր, որ մեռնեմ...

Ռեյզլի ցավերը սկսվել էին դեռ վաղ առավոտյան, բայց նա թաքնվեց ամենքից, ուզում էր, որ ոչ ոք չիմանա այդ մասին: Իրիկնամուտին, երբ ցավերն այլևս անտանելի դարձան, նա ընկավ մահճակալին, ձեռքերը սկսեց կոտրատել, ատամները սեղմել, ամբողջովին կապտեց, սևացավ և ոչ իր ձայնով գոչում էր.

— Մայրի՛կ, թանկագինս: Ինձ ուժ տուր, որ հանգիստ մեռնեմ:

Մի անհանգստացեք, պառավ Սորե-Ռոխլը, որ կանգնած էր նրա մահճակալի մոտ, այդպիսի բաներ շատ էր տեսել: Թևքերը քշտած մինչև խորդուբորդ արմունկները, կռացել էր Ռեյզլի վրա ու շշնջում էր.

— Գոռա՛, գոռա՛, զավակս: Ծննդկանը պետք է գոռա: Մի անգամ էլ որ գոռաս, աստծո օգնությամբ, կթեթևանաս: Քո մերը հիմի էն աշխարհում բարեխոսում է քեզ համար: Քո հերը հիմի երկնային թագավորի առաջ կանգնած աղոթք է անում քեզ համար: Տա՛ աստված, հաղթես ցավերին տղա բերես՝ ի մխիթարություն քո քաշածների...

Ցավերը մեղմանում են, Ռեյզլը պառկած է ասես ջարդված ու ցնորված, ականջները զնգում են, նա քնած չէ, բայց խլացած է ու չի հասկանում, թե ո՞ր աշխարհում է գտնվում: Ինչ-որ մի բան է կատարվում նրա հետ, ինչ-որ մի բան է տեղի ունենում: Գուցե այլևս վերջ նրա տանջանքներին: Գուցե մահանում է արդեն: Ռեյզլը չի ցանկանում մահանալ: Ո՛չ: Նա դեռևս հույս ունի գթությանը նրա, ով ապրում է հավիտյան, որ Զեթլը կվերադառնա, կգա իր մոտ հեռավոր Ամերիկայից, և ինքը դեռ կճաշակի իսկական կյանքը իր սիրելի, թանկագին Զեթլի հետ:

Որտե՞ղ է Զեթլը:

Դերձակ Զեթլը հարսանիքից մի քանի ամիս հետո փող աշխատելու համար հեռացել էր Կասրիլովկայից: Գնացել էր Ամերիկա: Հիմա բոլորը Ամերիկա են գնում: Գնացել է Զեթլը, չկա, ասես սկել է ջրի տակ:

«Կա-չկա իրեն փեսացուի տեղ է դրել, նորից օժիտ վերցրել, ա՛յ քթիցը դուրս գա էդ օժիտը, երկնայի՜ն թագավոր»:

Այդպես էին կարծում Կասրիլովկայում, ատաղձագործ Գենեխի տանը. այդպես էին կարծում բոլորը, բացի Ռեյզլից: Ռեյզլը այլ կերպ էր մտածում իր Զեթլի մասին. բոլորից լավ նա գիտեր նրան, չնայած Զեթլի հետ ապրել էր ոչ ավելի, քան չորս ամիս:

Ռեյզլը նրան սպասում էր ամեն րոպե, ամեն ակնթարթ. եթե նա ողջ և առողջ է, անպայման կվերադառնա կամ նամակ կգրի. նամակ կգրի և կուղարկի իր նկարը: Ախ, եթե աստված օգներ և գար այդ նամակը նկարի հետ, այն ժամանակ ո՞վ կհասներ իրեն:

Ռեյզլը ամբողջ ժամանակ մտածմունքից հանգիստ չէր ունեցել, գիշերներ շարունակ անքուն լուսացնելով, բոլորից ծածուկ, գլուխը թաղել էր բարձերի մեջ, որպեսզի բարեկամները լսելով իր լացը, չվշտանան, իսկ թշնամիներն էլ՝ չուրախանան:

Նրա վիշտը փոքր վիշտ չէր: Նա զգում էր, որ մայր պիտի դառնա: Ավա՜ղ, ինչ պիտի անի, գլուխն առնի ուր կորչի, ում դուռը բախի: Եթե Ռեյզլը չսարսափեր դժոխքից ու աստծուց, իր դատաստանը իր ձեռքով կտեսներ:

Եվ շատ հնարավոր է, որ հենց այն օրը, երբ գետում սպիտակեղեն էր լվանում, ցանկացել էր ջուրը նետվել: Բայց հիշելով այն աշխարհի դժոխային տանջանքները, գետնից խլել էր շորերի կապոցը և ոչ մեռած, ոչ կենդանի՝ վազել տուն: Վազել է նա ու պատահել պառավ Սորե-Ռոխլին:

— Ինչու ես էդպես վազում, աղջիկս,— հարցնում է Սորե-Ռոխլը:

Ռեյզլը լաց է լինում փոքր երեխու նման: Սորե-Ռոխլի փորձված աչքը իսկույն նկատում է, թե բանն ինչումն է, իսկ Ռեյզլն էլ ինչպես որ կարողանում է, սիրտը բացում է նրա առաջ:

— Ամեն ինչ աստծո ձեռքին է,— ասում է նրան Սորե-Ռոխլը,— ամեն ինչ: Ով գիտե, գուցե նա տեսնի քո տանջանքները, ու քո Զեթլը վերադառնա...

Զեթլի անունը լսելուն պես, Ռեյզլի ամբողջ արյունը խփում է երեսը: Նրանք երկուսով նստում են ինչ-որ մեկի խրճիթի պատի տակի թմբին, փսփսում, մատների վրա հաշվում ու բաժանվում:

Ռեյզլը որքան կարող էր, թաքցնում էր իր գաղտնիքը, մինչև որ մի հրաշալի առավոտ ամեն ինչ հայտնի դարձավ, և գաղտնիքը դադարեց գաղտնիք լինելուց: Եվ այդ օրվանից ատաղձագործ Գենեխի տունը նրա համար դարձավ դժոխք: Նրան թվում էր, որ բոլորը նայում են իրեն, բոլորը խոսում են իր մասին, իսկ ամենից անտանելին այն էր, որ ամենքն անիծում էին Զեթլին, տեղից վեր կացողը ինչպես քեֆը տալիս էր, չարախոսում էր նրան:

Ամենից շատ նրան ձանձրացրել էր հացթուխ Լեյան: Լեյան շատ էր խղճում Ռեյզին և հաճախ բերում էր թարմ բուլկի, մի կտոր խալա կամ տաշտաքերուքից թխած հաց ու հետն էլ ասում.

— Վերցրո՛ւ, Ռեյզլ, կեր, տա աստված, որ Ամերիկայում քո էդ խաբեբայի կոկորդին մնա հենց առաջին պատառը, ողորմա՛ծ աստված:

— Ախր գոնե անիծյալ հոգին իմանար, որ ուր-որ է հայր է դառնալու,— վրա էր բերում մյուս կողմից մելամեդ Ֆրումի կինը:

— Թեկուզ իմանա, ի՞նչ պիտի անի, գլուխը պատո՞վ պիտի տա, ինչ է, քոսո՛տ դերձակ, գետնի տակն անցնես հա՛,— կրակի վրա յուղ է լցնում Ասնա Հավիթաթը:

Այդ բոլոր կանայք հարևաններ են, և Ռեյզլի հետ միասին ապրում են ատաղձագործ Գենեխի տանը: Նրանցից յուրաքանչյուրը ունի խցի նմանվող իր փոքրիկ սենյակը, իր տնտեսությունը, իր վերմակներն ու բարձերը, իր ամուսինը, իր երեխաները: Իսկ երեխաներ, փառք աստծո, ինչքան ասեք: Տան մեջ մշտական իրարանցում է, ճիչ, աղմուկ: Երեխաները կռվում են միմյանց հետ, տանտիկինները եփում են ու թխում, հավաքվում են որևէ մեկի վառարանի մոտ, բամբասում, կշտամբում մեկմեկու, կռվում ու հաշտվում, պարտք են վերցնում իրարից, պարտք տալիս, միայն

թե պարտք տալու բան լիներ: Մի ուրախություն լինելիս բոլորով միասին ուրախանում են և ապրում համարյա մի ընտանիքի պես:

Ռեյզլը ասես արթնանալով քնից, վեր թռավ նվաղուն ճիչով:

— Աստվա՛ծ: Աստվա՛ծ իմ: Աստվա՛ծ:

— Ա՛յ, էդպես, ա՛յ էդպես, աղջիկս:— Հավանություն է տալիս Սորե-Ռոխլը:— Ա՛յ հիմա կսկսվեն իսկական ցավեր: Ա՛յ, որ մեկ, երկու, երեք անգամ էլ էդպես ճվաս, աստծու կամքով, բարով, խերով կազատվես... Այ էդպես, այ էդպես: Շնորհավորում եմ, աղջիկս, տղա բերիր:

Երբ Ռեյզլը տղա ունեցավ, նրանց առաջին գործը եղավ նորածնին լողացնելը, բարուրելը և պարզելը, թե ո՞ւմ է նման: Եվ երեք կանայք միաբերան գոչեցին.

— Ուռուցվորի «նրա» մռութը, ուռուցվորի: Տեղով «նա» է, ոնց որ ջրի երկու կաթիլ:

Հետո սկսեցին մտածել, որ ծննդկանի համար արգանակ չկար: Մեկը հանդիմանում էր մյուսին, որ սա նախապես չէր եփել գոնե մի հավ: Կծու խայթոցների կարկուտը թափվեց իհարկե Ասնա Հավիթաթի գլխին:

— Ախր դու, հենց էն կնիկն ես, որ հավի առևտուր է անում... Ձահե՛լ ես, ինչ է, չէի՞ր կարող մի երկու շաբաթ առաջ Ռեյզլի համար մի հավ գիրացնել: Վարսակը մենք կբերեինք, մորթողի վարձն էլ մեզ վրա կառնեինք...

Հացթուխ Լեյան թևերը քշտեց ու ծննդկանի համար կաթնահունց թխելու պատրաստություն տեսավ, իսկ մելամեդ Ֆրումի կինը վազեց ամուսնու՝ մելամեդ Ռաբբի Խաիմ-Խոնեի մոտ և խնդրեց թղթերի վրա գրել պահպանիչ անեծքներ, այսինքն՝ չարը խափանող թալիսմաններ, որպեսզի կախեր ծննդկանի չորս բոլորը:

Եվ մելամեդ Ռաբբի Խաիմ-Խոնեն թևքերը քշտեց ու գրեց այնպիսի թալիսմաններ, որ ամենահարուստ ծննդկանն անգամ իր օրում չէր տեսել: Թղթի մեջտեղում նկարված էր մի հետաքրքիր բուրգ.

Ադամ և Եվա

Աբրահամ և Սառա

Իսահակ և Ռեբեկա

Հակոբ և Լիա

Բուրգի երկու կողմերում գրված էին հանրածանոթ հմայիլներ:

Վհուկին ջնջիր աշխարհից:

Աշխարհից վհուկին ջնջիր:

Ջնջիր վհուկին աշխարհից:

Իսկ ցածում՝ ավելի խոշոր տառերով գրված էին.

Սինի Վեսոսինի ուսմանանգլաֆ:

Դրանք այն խորհրդավոր բառերն էին, որոնք խափանում էին աչքով տալը և զանազան այլ փորձանքները: Մի խոսքով, արված էր այնպես, ինչպես կարգն էր:

Ծննդկանը տեղում պառկած զարմանքից ապշել էր այդ կանանց վրա: «Թող աստված վարձահատո՛ւյց լինի նրանց: Ինչո՛վ եմ արժանացել: Այդ որ բարի գործերիս համար է...»:

Իսկ երբ տղամարդիկ վերադարձան աշխատանքից, նրանք սկսեցին խոսել երեխային թլպատելու արարողության շուրջը:

Ատաղձագործ Գենեխը չնայած հարուստ չէր և սեփական որդիների կողմից պակասություն չէր քաշում, բայց և այնպես հայտարարեց. այնքանով, որքան որ ծիսակատարությունը տեղի է ունենալու իր տանը, նա ցանկանում է կատարել սրբազան պարտքը և բրիսը վերցնել իր վրա: Այդ ժամանակ մյուսները իրենց վիրավորված համարեցին:

— Ինչո՞ւ պիտի միայն նրան վերապահվի սրբազան պարտքը: Չլինի՞ թե նա ամենքիցս լավն է: Էդ բրիսը մեր բոլորի բրիսն է:

Երբ բանը հասավ ծիսակատարության պատվավոր պարտականությունների բաժանմանը, մի փոքր տարաձայնություն տեղի ունեցավ:

Ատաղձագործ Գենեխը ենթադրում էր, թե քանի որ ինքն է մանչուկի տնատերը, հավանաբար սանդիկի[1] պարտականությունը կվերապահվի իրեն, բայց նա ամոթալի կերպով սխալվեց: Սանդիկի պարտականությունը, ասացին բոլորը, հասնում է մելամեդ, ռաբբի Խաիմ-Խոնեին, այն պատճառով, որ մելամեդ, ռաբբի Խաիմ-Խոնեն մի մարդ է, հասկանո՞ւմ եք, որ թալմուդը գոց գիտե: Այստեղ ատաղձագործ Գենեխին այլևս ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ բոլորի հետ միասին, ինչպես ասում են, սայլին լծվել և հայտարարել, որ հենց ինքն էլ էր ճիշտ այդպես կարծում...

Մի խոսքով, պատվավոր պարտականությունների բաշխումից մի կերպ գլուխ հանեցին:

Մնաց միայն մի հոգս, այն էլ ամենից հաճելի. որտեղի՞ց ճարել խմիչք:

— Խմի՛չք,— գոչեց պառավ Սորե-Ռոխլը:— Թող ձեր ամենամեծ հոգսը հենց դա լինի:

Եվ Սորե-Ռոխլը, վրան գցելով կատվի մորթուց բուռնուսը[2], գնաց իր գինեգործ փեսայի՝ Յուդլի մոտ, որ քաղցրահամ խմիչքներ էր պատրաստում: Սա երկու շիշ կարմրագույն օղի վերցնելով, որ կոչվում է «կրամբամբուլի», զոքանչի հետ եկավ այնտեղ, որտեղ կատարվելու էր բրիսի արարողությունը: Բոլորն աշխուժացան, զվարթացան. սկսվեցին կենացները:

— Լեխա՛ի՛մ,— ասաց մելամեդ ռաբբի Խաիմ-Խոնեն, որ վզին սև, փայլուն թաշկինակ էր գցել և մորուքի կեսն էլ ասես փետրած լինեին:— Լեխա՛ի՛մ: Տա աստված, որ մենք էսպես խմենք էն ժամանակ, երբ նա արդեն հասած տղամարդ կլինի:

— Լեխա՛ի՛մ,— ասաց ատաղձագործ Գենեխը:— Լեխա՛ի՛մ: Տա աստված, որ ապրենք ու արժանանք նրա հարսանիքին:

Իսկ Ասնա Հավիթաթի ամուսինը, սև, հաստ պռոշներով մի մարդ, նիկոլաևյան նախկին զինվոր, իրար ետևից երկու-երեք թաս գցելով, իր ցանկությունների մեջ ավելի հեռուն գնաց:

— Լեխա՛ի՛մ: Տա աստված, որ ապրենք մինչև էն օրը, որ կխմենք նրա էլ, նրա զավակների էլ, թոռների ու ծոռների բրիսի և հասունության և հարսանիքների ժամանակ:

Կանայք նույնպես ձեռքներն առան գավաթները, իհարկե, իրենց համեմատ. մի քիչ խմելով, կարմրատակեցին և սկսեցին բոլորը մեկեն էգ սագերի նման վրա տալ:

Հետո տղամարդիկ դուրս տարան սեղաններն ու նստարանները, վրաներից նետեցին պատմուճանները և, շատ ներողություն, մի թաք վարտիքով սկսեցին պարել, ինչպես, ներեցեք համեմատությանս համար, տորայի տոնին:

---

[1] Սանդիկ — հոգեհայր, քավոր, որը թլպատելու ժամանակ գրկում է երեխային:
[2] Բուռնուս — կանացի վերարկու:

Իսկ մահճակալի վրա, հին, ճղճղված սավանի ետևում, որին վերից վար ամրացված էին պահպանիչ թալիսմանները, նստած էր Ռեյզլը ու կրծքին էր սեղմել ցնցոտիների մեջ փաթաթված փխրուն մանկիկը: Նա նայում էր այդ լավ մարդկանց, որոնք այնքան բարիքներ կամեցան իրեն և չէր կարողանում հասկանալ, թե իր ո՞ր արժանիքի համար էր այդ ամենը և գորովանքով նայում էր մանկանը՝ իր միակ մխիթարությանը:

— Տեղո՛վը նա է: Ոնց որ ջրի երկու կաթիլ:

Եվ արցունքի երկու կաթիլ նրա խորունկ, կապուտակ, հրաշալի աչքերից հոսեցին գունատ, տանջված դեմքի վրայով ու ընկան սպիտակ, մատաղ կրծքին: